

Արձանագրություն N 155

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ-ի սեպտեմբերի 24 -ի նիստի Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետից գործուղումների հարցը/զեկ. Դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/
2. Դոկտորական և թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում /զեկ. Խ. Գալստյան/:
3. Աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը/զեկ. Խ. Գալստյան/:
4. Դոցենտի կոչման մրցույցի անցկացում/զեկուցող՝ Խ. Գալստյան/:
5. Ընթացիկ հարցեր. ա/ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կազմակերպած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2016» մրցույթին մասնակցության հարցը:

Խորհուրդը որոշեց.

1. ա/ Հանձնարարել դեկանին, ամբիոնի վարիչներին դասախոսների երկարատև գործուղման դեպքում (մեկ շաբաթից ավելի) գումարել խորհրդակցություն գործուղման նպատակահարմարությունը քննարկելու և ուսումնական գործընթացն անխափան կազմակերպելու համար:
բ/ Գործուղումներից վերադառնալուց հետո գիտխորհրդին ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների մասին:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները
ա/ Առկա ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հարավային Կովկասում տարածաշրջանային քաղաքական գործընթացների վրա «փափուկ ուժի» ազդեցության մեխանիզմները», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել քաղ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գարիկ Քեոյանին:
բ/ Առաջին կուրսի առկա ուսուցմամբ ասպիրանտ Սերգեյ Արթուրի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «ՀՀ հարաբերությունները Բուլղարիայի հետ 1992-2008թթ.», ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանին:
- գ/ Պատմ. գիտ. թեկնածու Ավագ Հարությունյանի դոկտորական ատենախոսության թեմա հաստատել «Հասարակական-քաղաքական մտքի հիմնական ուղղությունները Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թվականներին (համեմատական վերլուծություն)», ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար:

3. Հրատարակության երաշխավորել

ա/Հանրային կառավարման ամբիոնի դոցենտ ք.գ.թ., դոցենտ Է. Քալանթարյանի և նույն ամբիոնի դասախոս Կ. Ալթունյանի համահեղինակությամբ “Հանրային կառավարման տեսություն (մաս 1)” դասընթացի ծրագիրը:

բ/ Պ. գ. թ., դոցենտ Շիրակ Թորոսյանի “Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում (1919-1920թթ)” մենագրությունը երաշխավորել տպագրության:

4. Ընտրել ա/ հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ք.գ.թ. Սյուզաննա Նավասարդյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 29 անդամներից քվեարկությանը մասնակցել են 20-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ`

Նավասարդյան Սյուզաննա – 20 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

5. Երաշխավորել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կազմակերպած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2016» մրցույթին Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, ք.գ. թ. Արամ Մանուկյանի ներկայացրած «Հակակոռուպցիոն պայքարի առանձնահատկությունները խորհրդարանական կառավարման համակարգում»թեման:

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի դեկան, Գիտական խորհրդի
նախագահ, պրոֆ.**

Գ. Պետրոսյան

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
Ֆակուլտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.**

Խ. Գալստյան